## ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ, ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ՀԱՅՐԱՊԵՏԻ ԵՎ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ, ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-Ի ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՀԵՌԱԳՐԵՐԸ

ՆՈՐԻՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՄԵԾՈՒԹՅՈՒՆ ԵԹՈՎՊԻԱՅԻ ԿԱՅՍՐ
ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ Ա-ԻՆ

ԱԴԻՍ-ԱԲԵԲԱ

Հայաստանյայց առաքելական սուրբ եկեղեցու անունից Ձերդ Կայսերական Մեծությանը հղում ենք Մեր ջերմագին շնորհավորանքներն ու հայրապետական օրհնությունները՝ Նոր տարվա և մեր Տեր Հիսուս Քրիստոսի Աստվածահայտնության փառավոր տոների առթիվ:

Աղոթում ենք մեր երկնային Փրկչին, վասն խաղաղության համայն աշխարհի, ժողովուրդների եղբայրության, ինչպես նաև ձեր սուրբ եկեղեցու և ձեր հրաշալի եթովպական երկրի բարգավաճման ու մեծության:

Թող բարին Աստված օրհնի Ձերդ Կայսերական Մեծության կյանքն ու պատմական ազնիվ առաքելությունը:

**ՎԱԶԳԵՆ Ա**
**ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ**
**ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

ԷՋՄԻԱԾԻՆ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՎԱԶԳԵՆ Ա
ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Նորին Սրբություն.

Մեծ հաճույքով ստացանք Ձերդ Սրբության պատգամը՝ Նոր տարվա և Աստվածահայտնության տոների առթիվ: Ամենաանկեղծորեն շնորհակալ ենք Ձերդ Սրբության օրհնության և ազնիվ զգացումների համար:

ՀԱՅԼԵ ՍԵԼԱՍԻԵ
**Կայսր Եթովպիայի**

ԱՍՄԱՐԱ